«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Հաստատություն՝ Աբովյան քաղաքի թիվ 3 մանկապարտեզ

Դաստիարակ՝ Արաքսյա Բաբասիևա

Ղեկավար՝ ժաննա Ավետիսյան

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 5

1.1 Հայրենաճանաչողության ուսումնասիրության կարևորությունը նախադպրոցական տարիքում 5

1.2 Հայրենաճանաչողության ուսուցման գործընթացի հիմնական մեթոդները 8

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 11

2.1 Հայրենաճանաչության ձևավորման գլխավոր հասկացությունների ուսուցում նախադպրոցական տարիքում 11

2.2 Նպատակային միջոցառման կազմակերպում 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

Օգտագործված գրականության ցանկ՝ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Նոր սերնդի հայրենասիրական դաստիարակությունը ներկայիս հրատապ խնդիրներից մեկն է: Գաղտնիք չէ, որ ինչպես Հայաստանում, անյպես էլ ամբողջ աշխարհում տեղի են ունեցել մեծ փոփոխություններ: Սա առաջին հերթին վերաբերում է պատմությանը վերաբերող բարոյական արժեքներին եւ վերաբերմունքին: Շատ երեխաներ խեղաթյուրում են այնպիսի երեւույթներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, բարությունը եւ առատաձեռնությունը, դրա փոխարեն գերազանցում են նյութական հարստությունը եւ արժեքները,և չնայած այս ամենին, ոչինչ չպետք է խանգարի երեխաների հայրենասիրական դաստիարակության համար:

Հայրենասիրական դաստիրակությունը նախ հայրենիքի հանդեպ սիրո դաստիրակությունն է: Նրան նվիրվածութրունը, նրա հանդեպ պատասխանատվությունը: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիրակության խնդիրները բավականին շատ են:

Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար, որով էլ կարևորվում է ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

1. Մանկավարժական մեթոդների միջոցով երեխաների մեջ բարձրացնել հայրենաճանաչողության կարևորության մակարդակը
2. Երեխաներին պատմել պատմամշակութային վայրերի նշանակության մասին:

Հետազոտական աշխատանքի խնդիրները՝

1. Կատարել գրական աղբյուրների հետազոտություն, այդ թվում նաև, ինտերնետային կայքերի ուսումնասիրություն «Հայրենաճանաչողության կարևորությունը» թեմայի վերաբերյալ:
2. Կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, մեթոդներ, որոնք կբարձրացնեն թեմայի արդյունավետությունը:
3. Ստուգել առաջարկված մեթոդների արդյունավետությունը գործնականում:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, տեսական մասից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, աշխատանքի ծավալը կազմում է 19 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Հայրենաճանաչողության ուսումնասիրության կարևորությունը նախադպրոցական տարիքում

Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչողությունից: Հայրենաճանաչողություն դաստիարակելը այսօրվա կարևորագույն խնդիրներից մեկն է: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության գործընթացը անհրաժեշտ է սկսել նախադպրոցական հաստատություններում, որի հիման վրա էլ կձևավորվի նրանց հայրենաճանաչողությունը: Սերմանելով սեր հայրենիքի, քաղաքի, հայրենի բնության հանդեպ. ծանոթացնելով երկրի մշակույթին և պատմությունը՝ յուրաքանչյուր երեխա յուրովի է ընկալում իրեն շրջապատող միջավայրը: Այդ պատճառով էլ հայրենաճանաչողության ուսուցումը պետք է սկսել հայրենասիրական զգացմունքների ուսուցմամբ: Հայերենաճանաչողությունը բարոյական և հայրենասիրական կրթություն է: Հայրենաճանաչողության արժեքային համակարգի ձևավորումը պետք է դրվի ընտանիքում և մանկապարտեզում:

Հայրենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մասն է ու հիմնական խնդիրներից մեկը: Դաստիրակի և ծնողի խնդիրն է երեխաների մեջ հնարավորինս արթացնել սերը հայրենի հողի նկատմամբ: Կրթությունը կարևորագույն գործընթաց է, ազգի հիմք է: Վեհ ու արժեքավոր բաները, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին, և այդ ամենը կատարվում է հենց ազգային կրթության, մշակույթի և գիտության համակարգերի փոխգործունեության միջոցով , կրթության ֆոնի վրա, որի ողնաշարն ու առանցքը արժեհամակարգն է: Այն ամենամեծ ու ամուր հենասյունն է,որի վրա կառուցվում է ազգային գաղափարախոսությունը: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործը ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների

ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ երեխան հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Իսկ այս ամենի մեջ շատ կարևոր է նաև հայրենաճանաչողության ուսուցումը մանկապարտեզում :

Չէ որ մեր հայրենիքն ունի դարավոր պատմություն, նրա անունը հիշատակվում է այնպիսի հինավուրց քաղաքակրթությունների կողքին, որոնցից շատերը հիմա գոյություն չունեն, իսկ Հայաստանը մինչև հիմա կանգուն է, կանգուն է չնայած այն ամենին, ինչն նրա հետ կատարվել է այդ դարավոր պատմության ամենատարբեր դրվագներում: Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ, որը հոգևոր խորը արժեքներ է փոխանցում:

Տարբեր տարիքի երեխաների հոգեկան հատկանիշների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճիշտ որոշելու երեխաների ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը և ցուցաբերել անհատական մոտեցում, և այդ դաստիրակության մեջ իր ուրույն և առանձնահատուկ տեղը ունի հայրենասիրությունը: [1]

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ:

Պետք է հստակ գիտակցել, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը, ուստի շատ կարևոր է հայրենասիրության սերմանումը երեխաների մեջ սկսած նախադպրոցական տարիքից, որով էլ կայանում է սույն թեմայի արդիականությունը:

Հայրենաճանաչողության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կեցվածքը: Հայրենաճանաչողությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը

[1] Թութունջյան - <<Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները>>: 1962թ. էջ 32

հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին:

Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների և սաների միջև մի գործընթաց է որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը: Սրա նպատակն է կրթել համոզված հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին, պատրաստ է ծառայել և պաշտպանել հայրենիքը: [2]

Երեխաների հայրենաճանաչողության դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից է: Այս ուղղությամբ գոյություն ունի մեթոդաբանական գրականություն:

Դրա հիման վրա կրթական աշխատանքի այս ուղղությամբ կարելի է առանձնացնել առաջադրանքների մի ամբողջ համալիրը:

- Երեխայի սերը բարձրացնել իր ընտանիքի, տան, մանկապարտեզի, քաղաքի կամ գյուղի. փողոցի նկատմամբ:
- Երեխաների իմացություն իր արմատների մասին: Երեխաներին ծանոթացնել քաղաքի պատմությանը, և ենթակառույցներին:
- Երեխաներին ծանոթացնել պետության խորհրդանիշներին՝ դրոշ, զինանշան, օրհներգ:
- Սովորացնել հայկական երգեր, պարեր, պատմել ազգային տոների ու ծեսերի մասին
- Այցելել մշակութային վայրեր' հուշարձաններ, թանգարաններ:

Երեխաների տարիքը, նրանց գիտական մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են պարապմունքների ժամանակ դաստիարակի օգտագործած մեթոդներն ու հնարները:

[2] М. А. Данилов, Б. П. Есипов – << Дидактика>>,<<Метод екскурсии>>.1957г.

Հայրենաճանաչողության դաստիրակության նպատակն է կրթել հայրենասեր անձ, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին:

Բացի այդ էլ նախադպրոցական տարիքում զարգանում են բարձր սոցիալական մոտիվներ, զգացմունքներ և սերը: Դեպի հայրենիք հենց այս այս տարիքից է սերմանվում: [3]

1.2 Հայրենաճանաչողության ուսուցման գործընթացի հիմնական մեթոդները

Հայրենաճանաչողության ուսուցման գործընթացում, պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի մեթոդների, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիրակչական նպատակը: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սաների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն:

Առհասարակ հայրենասիրություն սերմանելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ:[4]

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիրակության և հայրենաճանաչության ձևավորման խնդիրները բավականին շատ են: Հիմնականումը ապրում են սիրո զգացում ընտանիքի իր հայրենի բնության, նկատմամբ:

Նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթությունը հայրենի քաղաքի, տարածաշրջանի հետ երկար և բարդ գործընթաց է: Դրական արդյունքի կարելի է

---

[3] Ա. Տեր-Գրիգորյան - <<Գործնական աշխատանքները բացատրականընթերցանության դասերին >>: 1963 թ.

[4] <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես 2014թ. էջ 38

հասնել միայն համակարգված աշխատանքով: Երեխաներին պետք է սովորացնել սիրել իրենց քաղաքը, հասկացնել որ իրենք քաղաքի հայենիքի մի մասն են:

Հայրենաճանաչության ձևավորման համար նախադպրոցական ուսումնական հաստատությունները օգտագործում են աշխատանքի տարբեր մեթոդներ և ձևեր՝ հաշվի առնելով երեխայի աշխարհայացքը: Այդ նպատակով արդյունավետ և հետաքրքիր աշխատանքներում ներառվում են զբոսանքներ, էքսկուրսիաներ, դիտումներ, դիտարկումներ, բացահայտումներ որոնք ավելի կմոտիվացնեն երեխաներին բուն թեմայի ընկալմանը և յուրացմանը: Նախադպրոցական տարիքում հայրենաճանաչության ձևավորման համար լավագույն տարբերակ՝ է օրինակ այցելել տարբեր ժամանակահատվածներում կառուցված զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձաններ, կամ էլ թանգարաններ:

Էքսկուրսիան հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը:

Այս ամենը նպաստում է երեխաների մատերիալիստական աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի շրջապատը, ամրապնդում են նրանց գիտակցական կարգապահությունը, սեր են արթնացնում դեպի բնությունը, հոգատար վերաբերմունք են դաստիարակում շրջապատի ու ընդհանրապես հայրենի երկրի բնության նկատմամբ:

Մեկ այլ կարևոր և կիրառելի մեթոդ է թեմատիկ միջոցառումները, որոնք ուղեկցվում են ազգային երգ ու պարերով, ներկայացումներով: Հենց այս ընթացքում էլ երեխաները սովորում, և յուրացնում են կարևոր ու արժեքային տեղեկություններ, որոնց գլխավոր հիմքն են հայրենաճանաչության ձևավորման համար:

Արդյունքում երեխաների մոտ ստեղծվում է հետաքրքրություն իրենց հայրենի հողի նկատմամբ, հարգալից և զգույշ վերաբերմունք տեսարժան վայրերի նկատմամբ. սեր և հարգանք բնության նկատմամբ, ազգային խաղերի և ազգային հագուստի իմացության նկատմամբ հետաքրքրություն, ազնվություն,

մարդկանց նկատմամբ հարգալից և բարեհաճ վերաբերմունք, ինքնահարգանք և մշակույթի կանոնների պահպանում:[5]

Երեխաների ծանոթությունը հայրենի հողին՝ պատմական, մշակութային, ազգային, աշխարհագրական, բնության առանձնահատկություններով, նրանց մեջ ձևավորում է բնավորության այնպիսի գծեր, որոնք կօգնեն դառնալ հայրենասեր և հայրենիքի քաղաքացի: Չէ՞ որ մանկության տարիներին ստացված վառ տպավորությունները հայրենի բնության, հայրենի հողի պատմության մասին հաճախ մնում են մարդու հիշողության մեջ ամբողջ կյանքի ընթացքում: Եվ ի զուր չէ, որ բանաստեղծ Կոնստանտին (Կիրիլ) Միխայլովիչ Սիմոնով «Հայրենիք» պոեմում գրում է.

«Դուք չեք հիշում մի մեծ երկիր, որը դուք ճանապարհորդել և ճանաչել եք

Հայրենիքը հիշում ես այնպես, ինչպես մանուկ հասակում էիր տեսնում»

Եվ իսկապես, որքան էլ մեծ լինի մեր երկիրը, մարդն իր սիրո զգացումը կապում է այն վայրերի հետ, որտեղ ծնվել, մեծացել է. այն փողոցով քայլել, բակում որտեղ նա տնկել է առաջին ծառը:

[5] Արապովա-Պիսկարևա Ն. «Իմ տունը». Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյահայրենասիրական դաստիարակության ծրագիրը

—

Արապովա-Պիսկարևա Ն. Իմ տունը . Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյահայրենասիրական դաստիարակության ծրագիրը

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

2.1 Հայրենաճանաչության ձևավորման գլխավոր հասկացությունների ուսուցում նախադպրոցական տարիքում

Նախադպրոցական տարիքը երեխայի անհատականության զարգացման շրջանն է: Անդրադառնալով հայրենասիրական զգացմունքների ծագմանը, նրանք միշտ հիշում են իրենց մանկության տպավորությունները:

Այս շրջանը նաև շատ նպաստավոր է հայրենասիրական զգացմունքներ սերմանելու համար: Հայրենասիրության զգացումը պետք է լինի գիտակցված ու ուժեղ: Ուստի պետք է երեխայի մոտ առաջացնել հետաքրքրություն, զարգացնել սիրո զգացում դեպի հայրենի հողը՝ Հայրենիքը:

Ծանոթացնել հարազատ մշակույթին և ավանդույթներին:[6]

[6] Основы дидактики. 2007г. с56

Ժամանակակից հանրակրթարանի խնդիրներից է երեխաներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում հայրենասիրական կատարողականությունը ուսուցանելիս

Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա զգում է զգացմունքների օգնությամբ իրեն շրջապատող իրականությունը: Ահա թե ինչու, ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի սիրո զգացումն իր հայրենի քաղաքին, գյուղին և երկիրին: Միայն դրանից հետո նա հիացմունք է զգում իր հայրենի քաղաքի հանդեպ: Որպես կանոն, սա արդյունք է համակարգված եւ երկարատև ազդեցություն կթողնի երեխայի վրա: Հայրենիքի հանդեեպ նախադպրոցականի սերը սկսվում է երեխայի մոտ վերաբերմունքի ձեւավորմամբ `մայրիկի, հայրիկի, պապի, տատիկի հետ:Այսինքն որտեղ նա ապրում է:

Շատ կարևոր է նաև ազգային տարբեր արժեքների, խորհրդանիշների, հիշարժան օրերի ուսուցանումը և դրանց կիրառումը ամեն պարապմունքի ժամանակ:

Ուստի անհրաժեշտ է կազմակերպել խաղեր,միջոցառումներ…

Խաղ՝ «Ճանաչիր ո՞րն է քոնը»:

Գրատախտակին փակցրել եմ մի քանի երկրների դրոշներ, և հանձնարարել երեխաներին գտնել Հայաստանի դրոշը:

Ապա միասին պարզել, վերլուծել թե ինչ են խորհրդանշում գույներից յուրաքանչյուրը:

Հայաստանի դրոշի գույներն են՝

Կարմիրը - հայրենիքի պաշտպանության համար հայերի թափած արյունը և մեր ժողովրդի հաղթանակն է,

Կապույտը - Հայաստանի պարզ երկինքը,

Ծիրանագույնը- մեր ժողովրդի ստեղծագործ աշխատանքը:

Կարելի է նաև երեխաներին ցույց եմ տալի մանկապարտեզի բակում ամրացված եռագույնը:

Հաջորդ կարևոր խորհրդանիշն է զինանշանը: Պետական զինանշանը խորհրդանշում է երկրի հասարակական - քաղաքական կարգը:

Անհրաժեշտ է գրատախտակին փակցրել եմ Հայաստանի զինանշանը, և հանձնարարել որպեսզի երեխաները ասեն թե ինչ պատկերներ են տեսնում զինանշանի վրա, քննարկելով երեխաների տված բոլոր պատասխանները, ներկայացնել, որ այստեղ պատկերված են այն խորհրդանիշները՝ ինչով հայտնի է մեր երկիրը և միշտ պաշտպանության կարիք է զգացել:

Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի թագավորություններից չորսի՝ վերևից ձախ՝ Բագրատունիների, վերևից աջ՝ Արշակունիների ներքևից ձախ՝ Արտաշեսյանների, ներքևից աջ՝ Ռուբինյանների զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

Հայաստանի զինանշանի հիմնական գույնն է ոսկեգույնը, պատմական Հայաստանի թագավորություններինը՝ վերևից ձախ՝ կարմիր, վերևից աջ՝

կապույտ, ներքևից ձախ՝ կապույտ, ներքևից աջ՝ կարմիր, և կենտրոնում՝ վահանի վրա պատկերված Արարատ լեռը՝ նարնջագույն: Նշված գույները խորհրդանշում են Հայաստանի դրոշի գույները:

Երրորդ խորհրդանիշը՝ - Օրհներգն է: Պետք է հիշել որ օրհներգը լսելիս կամ երգելիս ոտքի ենք կանգնում և աջ ձեռքը սեղմում սրտին: Դա նշանակում է, որ սիրում ու հպարտանում ես քո հայրենիքով:

Հայրենաճանաչության ձևավորման մեկ այլ կարևոր հանգամանք է նաև Հայաստանի տարածքի իմացությունը՝ մայրաքաղաքի, մարզերի, խոշոր քաղաքների, նշանավոր վայրերի և մեր սրբազան լեռ՝ Արարատի, մասին ուսուցումը:

Հայաստանի Հանրապետության մարզերի քարտեզային իմացությունը բարելավելուն զուգահեռ երեխաները յուրացնում են նաև պատմամշակութային վայրերի մասին ավանդազրույցներն ու պատմությունները, իսկ սրան զուգահեռ կարելի է կազմակերպել հայրենաճանաչողական և բնասիրական արշավներ դեպի այդ վայրեր: Չէ որ, սիրել, նշանակում է ճանաչել:

Այնուամենայնիվ պետք է հստակ գիտակցել, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը, ուստի շատ կարևոր է հայրենասիրության սերմանումը երեխաների մեջ սկսած նախադպրոցական տարիքից:[7]

2.2 Նպատակային միջոցառման կազմակերպում

Հիմք ընդունելով տարբեր ուսումնասիրություններ, պարզ է դառնում, որ գործնական պարապմունքները շատ կարևոր են նախադպրոցական տարիք երեխաների հայրենաճանաչության ձևավորման համար, այդ պատճառով էլ անհրաժեշտ է մշտապես կազմակերպել գործնական աշխատանքներ, նպատակայաին այցեր դեպի տարբեր հուշարձաններ, տալ տնային հանձնարարություններ ինչպես նաև կազմակերպել միջոցառումներ: Պատմական հուշարձաններ այցելելը հիանալի տարբերակ է տվյալ վայրում եղած պատմական դեպքերին ծանոթացնելու համար:

[7] https://www.president.am/hy/state-symbols/

Ինչպես նաև հայրենասիրական երգերի, պարերի ուսուցանումը, որը լավագույն միջոցներից է հայրենասիրության ուսուման և հայրենաճանաչության ձևավորման համար :

Վերը նշվածները գործնականում կատարեցի դեռ կրտսեր տարիքում:

Դեռ կրտսեր տարիքից երեխաների մեջ կաթիլ առ կաթիլ, սերմանել եմ հայրենասիրություն,տարիների ընթացքում երեխաները այցելել են պատմամշակույթային հուշարձաներ, հասկացել են դրանց նշանակությունը:Ծանոթացել են եռագույն դրոշին, զինանշանին,երգել են օրհներգը, ճանանչել են Հ.Հ տարածքը քարտեզով:

Ուստի տարիների ընթացքում ստացած գիտելիքներն ու տպավորությունները արտահայտելու համար Ավագ խմբում կազմակերպվեց միջոցառում «Հայաստան», խորագրով , որի ժամանակ երեխաները ներկայացանցան հայկան տարազային հագուստներով:Եվ ներկայացրեցին իրենց մեջ հայրենասիրական ոգին խրոխտ պարերի, երգերի, բանաստեղծությունների միջոցով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՛ հայրենաճանաչողության կարևորության մասին կարելի է խոսել երկար: Ուսումնասիրելով հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական պատմությունը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունները, ձեռքբերումները, ստեղծած արժեքների և համամարդկային նվաճումների, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարությունների ու կորուստների մասին երեխաների հիշողության մեջ ամրապնդվում է հայրենասիրությունը: Ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթական բոլոր ոլորտներում պետք է դրվի հայրենաճանաչողության կարևորության հարցը:

Հայրենաճանաչողության դաստիարակության մեջ հաջողության կարելի է հասնել, եթե մեծերն իրենք իմանան և սիրեն իրենց երկրի, քաղաքի կամ գյուղի պատմությունը: Մենք պետք է կարողանանք ընտրել այն գիտելիքները, որոնք հասանելի են նախադպրոցական տարիքի երեխաներին, ինչը կարող է երեխաներին ոգևորել և հպարտանալ:

Քիչ ենք, այո՛, բայց դարերի ընթացքում կարողացել ենք պահպանել մեր ազգը,կրոնը,մեր գիր ու գրականությունը,մեր մշակույթը ու թույլ չենք տվել ոչ ոքի խլել մեզանից այդ հարստությունը,երբեք չենք կորցրել հույսն ու հավատը,մեր մարդկային արժեքները,որոնք սերնդից սերունդ փոխանցվել է հայ ազգի զավակներին,մեր անվախ սերնդին,որոնց երակներով հայի թունդ արյունն է հոսում՝ փոխանցված հայ քաջերից,որոնք կյանքի գնով պաշտպանել են սուրբ հայրենիքի սահմանները ու ոչնչացրել յուրաքանչյուրին,ով համարձակվել է ոտք կոխել հայրենիքի սահմաններից ներս,իր ձեռքից խլելու մեր մարտիկների անգին արյունով գնված տարածքը:

Ելնելով նշվածից՝ առաջ են եկել հետևյալ առաջարկությունները

- Մենք պետք է օգտագործենք բոլոր տեսակի բանահյուսությունները՝ հեքիաթներ, ասացվածքներ, երգեր, տաղեր, պարեր: Ժողովրդական արվեստում պահպանվել են բարոյական արժեքներ բարության, գեղեցկության, ճշմարտության, քաջության, աշխատասիրության և հավատարմության գաղափարների շուրջ:

- Շրջապատող առարկաներ, որոնք առաջին անգամ են արթնացնում երեխայի հոգին, նրա մեջ գեղեցկության զգացումը, հետաքրքրություն են սերմանում, պետք է լինեն ազգային: Սա օգնում է երեխաներին վաղ տարիքից հասկանալ, որ նրանք հայ ժողովրդի մի մասնիկն են:

Օգտագործված գրականության ցանկ՝

1. Թութունջյան - <<Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները>>: 1962թ.
2. Ա. Տեր-Գրիգորյան - <<Գործնական աշխատանքները բացատրականընթերցանության դասերին >>: 1963 թ.
3. <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես 2014թ.
4. Արապովա-Պիսկարևա Ն. «Իմ տունը». Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյահայրենասիրական դաստիարակության ծրագիրը
5. Չիբուխչյան, Լ. Սարգսյան՝ Մայրենի լեզվի պարապմունք, մանկապարտեզի ավագ խումբ՝ ուսումնամեթոդական ձեռնարկ:
6. <<Основы дидактики>>. 2007г.
7. М. А. Данилов, Б. П. Есипов - << Дидактика>>,<<Метод екскурсии>>.1957г.
8. <<Народное образование>>.2012г.
9. Яковленко Л. Петриновна - << Методика организации екскурсии в начальной школе>> 2014г.
10. https://www.president.am/hy/state-symbols/